

## Résumé

## L'EGLISE DU BERGER D'ANI

(Ing. S. DJEVAHIRDJIAN)

Grâce à ses nombreux articles parus surtout dans «Bazmavēp» depuis 1940, l'A. est bien connu dans le domaine des études de l'architecture arménienne médiévale. Sa présente recherche est consacrée à la très célèbre «Eglise du Berger» à Ani, capitale du royaume arménien des Bagratides; il l'examine dans ses composantes topographiques, historiques, statiques et artistiques, attachant une attention particulière aux propriétés structurales de l'édifice.

L'église du Berger, actuellement dans un état désolant de ruine, est construite hors des remparts d'Ani, à une distance de 1500 m. environ, au nord de la Porte Majeure, probablement vers la fin du X<sup>e</sup> siècle. La tradition en attribue la construction à un berger, auquel était interdit, en raison de son appartenance sociale, l'accès aux églises de la ville, réservées à la noblesse.

Bien qu'inspirée en partie de la construction plus ancienne de l'église Gagkašen, située à l'intérieur de l'enceinte de la ville, l'église du Berger présente des différences considérables par rapport au style arménien traditionnel, en particulier dans ses structures internes.

Il s'agit, en réalité, d'un édifice de modestes dimensions: une petite chapelle à trois étages, de 11 m. de haut, s'élevant sur une plateforme ronde à deux gradins, ayant un diamètre de 7 m. Le rez-de-chaussée, à forme d'étoile, se présente à l'extérieur avec douze et à l'intérieur avec six niches. Il a une hauteur de 5 m. Le premier étage, hexagonal à l'extérieur et circulaire à l'intérieur, s'élève à une hauteur de 3 m. L'étage supérieur constitue une tourelle coiffée d'un toit conique.

L'A. passe ensuite à la description minutieuse de l'intérieur où il considère successivement la simplicité des murs de l'hexagone inférieur, les traces de l'escalier en bois conduisant à l'étage supérieur, les fenêtres, les absides, les clefs de voûte et la naissance des arcs, la taille très régulière des pierres, la composition du ciment, le noyau.

Il fait ensuite une analyse comparative des édifices ronds étoilés, connus depuis l'époque hellénistique (Athènes, Delphis, Rome, Ravenne). La comparaison la plus intéressante est celle avec le temple païen remontant aux X<sup>e</sup>-VIII<sup>e</sup> siècles av. J.C., découvert en Arménie, au nord-ouest du village Horomos, par l'architecte T'oramanean.

La dernière partie de l'étude est consacrée à l'analyse des éléments décoratifs. L'article s'achève par un triste épilogue où l'A. déplore le manque absolu d'intérêt pour la conservation de ce qui reste en état si précaire de ce monument exceptionnel menacé de ruine totale, et dont la perte serait irremplaçable non seulement pour la culture arménienne, mais pour la civilisation humaine en tant que telle.

## Հ. ՂԵԻՌՆԴԻ ԱԼԻՇԱՆ

## ՏԵՍՈՒՋ ՓԱՐԻՋԻ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

(Շաբ. տե'ս «Բազմավեպ» 1976, ք. 3-4, էջ 316-340)

## ՀԱՆԴԵՍՆԵՐ ԵՒ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ

Աշակերտներու դաստիարակութեան եւ կրթութեան մեծապէս կը նպաստեն վարժարանէն ներս սարքուած հանդէսները, ըլլա՛ն անոնք ուսումնական տարւոյն բացման կամ փակումին, ըլլան նաեւ ուրիշ ոգեկոչումներ՝ կատարուած այլազան առիթներով: Թուենք կարգով այն տօնակատարութիւնները կամ հաւաքոյթները՝ որոնք տեղի ունեցած են 1858-1861 տարիներու ընթացքին, Փարիզի Մուրատեան վարժարանին մէջ, ի ներկայութեան Ալիշանի:

1. — Վերեւ տեսանք արդէն, թէ 1858 տարւոյն վերջին ամիսներուն՝ որքան ծանր էր տեսուչ Հ. Ռաֆայէլի առողջական վիճակը, ու Ալիշան խոհեմութիւն չէր համարեր կատարել ուսումնական տարւոյն փակումի հանդէսը. «վասն այսպիսի դիպուածոց եւ կրից ոչ կամեցաք կատարել այժմ զհանդէս պարգեւաբաշխութեան մանկրտւոյն, այլ թողցի յետ դիւղական պարապմանց. բայց յառաջիկայ կիւրակէիս փոքու հանդիսիւ կատարեսցուք զհրաժեշտ յուղարկելի մանկանց»<sup>76</sup>, եւ իրապէս, շրջանաւարտ հինգ աշակերտներու մեկնեալէն առաջ<sup>77</sup>, կը վատարուի վարժարանի դահլիճին մէջ ներքին «փոքր

76. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 16 Օգոստ. 1858, առ Աբբահայրն Գէորգ Հիւրժիւզեան, Վենետիկ. Նախապէս գրած էր Ալիշան. «Եթէ երեսնացի նշան օրըստօրեայ լաւութեան՝ արասցուք զպարգեւաբաշխութեան հանդէս, ապա թէ ոչ՝ չկամիք եւ չկամիմք վիսահար սրտիւ առնել, բայց եթէ չափաւոր ինչ եւ ընտանեկան՝ ի շնորհս ուղեւոր մանկանց», (8 Օգոստ. 1858, առ Աբբահայրն Գ. Հիւրժիւզեան):

77. Շրջանաւարտ աշակերտներէն Յովհաննէս Պոյաճեանի մահուան մասին, յաջորդ տարիներու նամակներու մէջ, Ալիշան կու տայ հետեւեալ ծանօթութիւնը. «Վատթարութիւն Պոյսոյ իրաց վատթարացոյց եւ զգործս վաճառականաց տեղ-

հանդէս միտարարաշխուժեան եւ պարզեւաց երից աւարտավարժ դասուց»<sup>78</sup>:

Նոյն տարւոյն (1858), Ալիշան կը կասկածէր թէ յաջողի աշակերտներու գիւղազնացութիւնը, որովհետեւ «մինչդեռ ակն ունէաք յետ երից աւուրց գնալ ի վերսայլ ի դեղջ զբօսանս, ահա ի ժամու գիր ընկալայ զի ասպնջականն ոչ ընդունի զմեզ, որպէս եւ ոչ ի Ֆոնդէնդպլոյ ընդունելի եղաք՝ վասն նորոգութեանց վարժարանին, եւ կամք տարակուսեալ»<sup>79</sup>: Ձեռք գիտեր ինչպէս, յանկարծ կը բացուի վերսայլի ճամբան, եւ Օգոստոս 30ին, 46 հոգիով կը փոխադրուին հոն, հետեւին շառնելով վարդապետներն ու վարժապետները, հիւանդին քով ձգելով միայն Գերպ. Եղուարդ Հիւրմիւղը: Ալիշան փոքրիկ տետրակի մը մէջ նշանակած է գիւղազնացութեան ընթացքին կատարուած ծախսերը, ուսկից կ'իմանանք ինչ ինչ մանրամասնութիւններ՝ որոնք հետաքրքրական են եւ արժանի ուշադրութեան: Երջանը տեւած է 28 օր, ու գրեթէ ամէն օր Ալիշան կատարած է հիւանդ տեսուչին այցելութիւնը, որովհետեւ յուշատետրին մէջ կը կարդանք «երթ եւ դարձ ի Բարիզ եւ վերսայլ 24 անգամ», որու համար ծախսած է 41 Փրանք, տան վարձքին՝ 300 Փր., հացին՝ 275 Փր., միսին՝ 359 Փր.: Եղած ծախսերուն մէջ կը կարդանք Ալիշանի

ւոյն որ աստ. եւ ամենայն գործակալը եւ վաճառակիցը փակեցին զտունս իւրեանց, յորս գլխաւոր՝ Փանոսեանն կոմիտաս, գործակալ Ալլահպետեանց. ադէտը՝ մի ըստ միոյ հասին առնս, եւ երէկ վախճանեաց զկեանս իւր համառօտս քեռորդի նորա եւ մերոյ վարժարանի աշակերտ հին, Յովհաննէս Պոյաճեան, ամաց 22, որ յաշնայնում 1858 ամի արձակեալ էր աստի ի լրմանս ուսմանց եւ կայր առ քեռուոյն, առ վաճառականի մեծի սպասաւորելով եւ սիրելի եւ յաջող երեւելով եւ բարիանուն. ապաքինեալ ի խօթութենէ՝ յետ ձօթնեկաց անկանի ի ծանրագոյն հիւանդութիւն աղեաց բորբոքման կամ խանդարման եւ յաւուրս վեց զրաւի. զառաջին պատրաստութիւն առ մեծն չու արարեալ երկաւորքը յառաջ ի ձեռն մեր, երէկ անագան ժամանեալ զտի այն ինչ անշնչացեալ, բայց մերձաւոր քահանայ պաշտեալ էր զյետին խորհուրդն. այսօր հրաւիրիմք առ յետին սպաս յուղարկաւորութեան» (Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 11 Մարտ 1861, առ Արքահայրն Գ. Հիւրմիւղեան, Վենետիկ):

78. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 27 Օգոստ. 1858, առ Արքահայրն Գեորգ Հիւրմիւղեան, (այսուհետեւ կը զննեք պարզապէս՝ Ա. Գ. Հ.), Վենետիկ: Հանդէսէն ետք, 26 Օգոստոսին, Պոլիս կ'ը մեկնին շրջանաւարտ աշակերտները, որոնց համար Ալիշան կը գրէ՝ թէ «բարեկէն պատրաստեցաք եւ զգետտս պատանեացն դարձաւորաց» (6 Օգոստ. 1858, առ Ա. Գ. Հ.): Պոլիս դարձող աշակերտներն են. Հէստունեանն Թոմաս, Պ. Ինճիճեան եւ Յովսէփ Տէր Դաւթեան. այսօր Յ. Պոյաճեան ել ի վարժարանէս եւ զնաց առ քեռի իւր՝ կոմ. Փանոս. (...), Գապարաճեանն մնալոց է եւ ամիսս ինչ, առ ի կատարեւադործել զվիմագրութեան արուեստն. իսկ զԱյտընեանն՝ Ֆոնատ փաշայ մուծանելոց է ի վարժարան անտառագիտութեան (...). այսօրիկ են զնացեալքն եւ զնալիք» (27 Օգոստ. 1858, առ Ա. Գ. Հ.):

79. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 27 Օգոստ. 1858, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

գրչով իսկ մանրամասնօրէն նշանակուած՝ «չաքարեղէն վասն մանկանց 45-90 Փրանդ»: Նկատմամբ վերսայլի գիւղազնացութեան՝ կարծէք Ալիշան խանդավառ չէ, որովհետեւ «ճարտարութեամբ վրձնոյ նկարահանից եւ ոչ վրձնաւ բնութեան մրցի ընդ նմա (Աղոլոյ), սակայն ազնուութիւն օգոյն կամ ազատութիւն ծանուցանէ զի քաջ գիւղ է եւ հովասուն եւ ոչ որպէս գիւրիզ մղձուկ»<sup>80</sup>:

Մրադրին համաձայն՝ 1858 տարւոյն գիւղազնացութեան օրերէն ետք, օգտուելով տեսուչ վարդապետին առողջական նպաստաւոր մէկ վայրկեանէն, Հոկտ. 25ին կը կատարուի «հանդէս պարզեւարաշխութեան մանկուոյն, նախագահութեամբ Նուիրակին եւ ընթերակայութեամբ Թիւքէի աթոռակալի արքեպիսկոպոսի եւ Միհրան Պէյի (Տիւղեան)»<sup>81</sup>. այս վերջինս դեռ նոր հասած էր Պոլիսէն, եւ Մուրատեան վարժարանէն ստացած բարի տպաւորութիւններով, քանի մը օր ետք, կը մեկնի Վենետիկ եւ հուսկ՝ Պոլիս:

2. Ալիշանի նամակներուն մէջ՝ անցողակի ակնարկէ մը կ'իմանանք որ 1859 Մարտ 2ին, այն օրը՝ երբ ստացած էր Հիւրմիւղեան Արքահօր նամակը եւ պատասխանած էր համարկամ՝ ընդունելով վարժարանի տեսչութեան պաշտօնը, զարմանալի զուգարդիպութեամբ մը վարժարանին մէջ կը կատարուի թատերական հանդէս մը. «աւուրքս զբաղանաց են, թէեւ այլք քան զիս զբաղեալք վասն թատերական հանդիսի, որ եւ յայսմ երեկոյի կատարեսցի ի վարժարանին»<sup>82</sup>, առանց նշանակելու թատերախաղին խորագիրը կամ այլ պարագաներ: Դժբախտաբար, Ալիշանի յարակից նամակներէն անկարելի եղաւ լուսաբանել այս մուրժ մնացած փէտը: Կարելի է, սակայն, գուշակել թէ նիւթը պէտք է եղած ըլլայ զաւեշտ մը, կատարուած՝ բարեկենդանի զգեստներով, որովհետեւ երբ Հիւրմիւղեան Արքահայր անհրաժեշտ կը նկատէ Մուրատեան վարժարանէն վանք կանչել Հ. Գրիգորիսը, Ալիշան կը խնդրէ որ հարցը տարբեր ձեւով մը կարգադրուի, որովհետեւ Հ. Գրիգորիս «ի բազում դէպս եւ հուսկ ի հանդերձանս լաւրեկենդանական հանդիսից»<sup>83</sup> օգտակար է վարժարանին:

3. 1859ի Մայիս ամսուն առաջին օրերուն կը կատարուի ուրիշ հանդէս մը, որ երախտագիտութեան տուրք մըն է հանդէպ վարժարանի բարերար՝ Սամուէլ Մուրատեանի, եւ անոր հետ՝ Միաբանութեան հիմնադիր Միսիթար Արքահօր: Քաղաքական տխուր օրերը եւ տնտեսական դժուար վայրկեանները թոյլ չեն տար որ հանդէսը կատարուի պէտք եղած շուքով. անով հանդերձ՝ «կատարեցաք զիշա-

80. Ալիշան Հ. Ղ. Վերսայլէն, 7 Սեպտ. 1858, առ Հ. Արքահայրն Ժարեան, Վենետիկ:

81. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 26 Հոկտ. 1858, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

82. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 2 Մարտ 1859, առ Հ. Արքահայրն Ժարեան, Վենետիկ:

83. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 22 Մարտ 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

տակ հիմնադրի վարժարանիս, ընդ որում եւ զմերոյ Ուխտիս Մխիթարայ, խառնեալ ընդ հանդէս եռամսեայ ուսմանց եւ մրցանակաց. զսովորական կոչունսն ոչ տուաք օտարաց, առ խնայողութեան, բայց յաւարտ ուսումնական տարւոյն՝ հարկ լիցի վարժեմ գոնեա զվարժապետսն հաճել, քանզի եւ ակն կարեալ մնան ոմանք այդպիսում մխիթարութեան»<sup>84</sup>:

4.— Եթէ 1858ի ամսվերջի հանդէսը անցաւ առանց շուքի, պատճառ չկայ այլեւս որ յաջորդ տարին կրկնուի նոյնը. հանդէսը կ'ըլլայ «մեծագոյն», որովհետեւ «տեղիս այս, ասեն, այսպէս պահանջէ, եւ որչափ ես գլուխս սիրեմ, այնչափ այլք յորդորեն յ'էդպալած, եւ զի հերոն լուրթեամբ անցաք վասն կարեւոր հիւանդին, զայս ամ փոքր մի գաղղիապէս աղաղակեցաք»<sup>85</sup>:

Թէ ինչ բանի մէջ կը կայանայ «մեծագոյն» հանդէսը, որ «գաղղիապէս» աղաղակելով անցած է, կը թողունք Ալիշանի՝ որ աղատութեամբ պատմէ<sup>86</sup>, յուսալով հաճոյք պատճառել մեր ընթերցողներուն ալ:

«Յաւուրց հետէ ընկալեալ զընտրհալոյ ի վերջնում աւուր սահեալ ամսոյ, ոչ կարէի գտանել ժամ պատասխանուոյ, զբաղեալ ի հարցաքննութիւն մանկտւոյն եւ ի հանդէս պարգեւաբաշխութեան, որ եւ կատարեցաւ երէկ յոյժ վայելչապէս եւ հասարակաց գոհութեամբ. բայց գիտաւոր եւ մեծագոյն գոհութիւն մեր էր, զի վարք եւ քանք մանկտւոյն առասելեալ գտան քան ի հերոն: Նախագահ հանդիսի (ի հրաժարել հազարապետի ուսմանց) ընտրեցաք զՊարոն Դայլըր կաճառորդ կացրդարանին (Institut), պաշտպան եւ նախագահ ընկերութեանց արուեստից եւ բարերարութեանց, այլ ծանօթ եւ սիրելի բազմաց եւ բարեպաշտ. եւ է ծերունին այն՝ որ երկու կամ երեք ամօք յառաջ եկեալ ի Ռափայէլեան վարժարան, առաջի Վ. Հ. Աբրահամով եւ իմ խօսեցաւ ջերմաջերմ գովութիւն զՄխարանութենէս չըրթամբք, ձեռք եւ ոտիւք, մինչեւ խանդավառեալ ոմն կարծել զնա. բայց աստ ուղղեցի զկարծիս, լուեալ ի հասարակաց գովութիւն առնն, զոր եւ կրկին ընկալաւ վայելչապէս նախագահութեամբն, եւ կեալ հանդիսի զգեստիւք եւ, բազում նշանօք չըոյ զարդարեալ, յո-

84. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 13 Մայիս 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

85. Ալիշան Հ. Ղ. Ֆոնդէնըպլոյէն, 16 Մեպտ. 1859, առ Հ. Աբրահամ ձարեան, Վենետիկ:

86. Ամսվերջի հանդէսին նախագահութեան համար՝ Ալիշան կը դրէ. «խորհեցաք հրաւիրել զՄուսուրուս զգեստպան Անդրիոյ, որ յամսոց հետէ աստ է, բայց Կոնսթանդնուպոլսէ հաճոյ, ասելով թէ յոյն է եւ նախանձի ընդ Հայս. գուցէ եւ Հայն նախանձի ընդ յոյն: Արդ՝ զական ի հազարապետ ուսմանց կառուցեալ է մեր, եւ պատրաստեալ եմք զրով հրաւէր, տեսցուք թէ առնուցո՞ւ յանձն» (1 Օգոստ. 1858, առ Ա. Գ. Հ. Վենետիկ):

րոց մի եւ օսմանեանն է, զի ուղեւորեալ է յԵփեսոսս եւ ի Կ. Պօլիս՝ յանձնարարութեամբ պետութեան տեղւոյս, եւ գրեալ բազում գիրս ուղեւորութեանց: Ունէաք զայս ամ եւ երաժշտութիւն զինուորական, յետ որոյ խօսեցայ ես ի Յայմաւուրաց Հայոց, զաւուրն յիշատակ, այսինքն զ11 Օգոստոսի, զՏօն ՀԱՅԿԱՅ եւ զթուական նորա, զոր յետոյ բազումք խնդրեցին տպագրել կամ զհաւասարն ընդունել, թէեւ չէր ինչ պայծառ դրուած, այլ վասն նորութեան իրացն<sup>87</sup>: Յետ որոյ, նախագահին կանդուն վալով՝ ընթերցաւ ճառիկ մի գովեստի զՄխարանութենէս, յոյժ մեծարելով, առանձին յիշելով զճարտարութիւն նկարուց եւ ուրուագծաց սանից Ռափայէլեան վարժարանին, զորս վերադասեաց քան զամենայն վարժարանաց Գաղղիոյ, բաց ի միոյն ի մեծէ վարժարանէ գեղարուեստից (Beaux Arts). եւ աւանդեաց մեզ զճառն ի տպագրութիւն, ուղղելով առ Moniteur լրագիր, խոստացեալ տպագրել եւ այլուր, զոր ոչ դանդաղեցուք առաքել այդր (...): Այսօր գնացաք ի շնորհակալութիւն առ Պարոնն, որ սաստիկ բարեկամութեամբ կապեալ է (...). շնորհեաց յընծայ մատենադարանի վանաց եւ երկոցուն վարժարանացս երկու երկու հատորս զուղեւորութեանց իւրոց յԵփեսոսս եւ յԱսորիս, յորոց յետինն 35 անգամ տպագրեալ է, ոսկեկաղմ սարօք (...): Ընծայեցաք եւ մեք նմա յերկասիրութեանց մանկտւոյն զվրմադիր պատկերս (...): Եկեալ էր ի հանդէսս եւ Նազիմ Պէյ՝ որդի Ֆուստ փաշայի, մտեղէն կոթող, այլ ազնուաբարոյ եւ բարեմոյն»<sup>88</sup>:

87. Յիշուած ճառը Ալիշան վարդապետ է Ֆրանսերէն լեզուով, որու նախագագափարը կամ ամփոփոյքը տարիներ առաջ հայերէն լեզուով խօսած էր Ռափայէլեան վարժարանի մէջ, ի ներկայութեան վանականներուն եւ աշակերտութեան: Նոյն օրերուն կը զգուշանան «Բաղմալէպէ» մէջ հրատարակել ճառը, հայերէն լեզուով, զգի մի հայերէն եւ յի հրատարակեալ՝ օտարազգիք գողացին ըզվաստակ մխարանիցս» (Ա. Գ. Հ. Վենետիկէն, 20 Օգոստ. 1859, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ), ինչպէս սովորութիւն էր նոյն դարուն: Ներկայիս Աբրահամ Մարտիրոսեան, ու իր կողմէ կ'առաջարկէ «տալ զայն այդր (ի Փարիզ) ի տիպ. բայց թէ վասն առաւելութեան ծախուցն այդր, կամ վասն տպագրելոյ զայն հանդերձ հայ քննդարան կամիցիս յղել այսր՝ ազատ ես ի յղել» (Անդ):

88. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 12 Օգոստ. 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ: Յետոյ դարբար Դայլըր կապ կը պահէ վարժարանին հետ. Վերափոխման օրը ներկայ դարբար Դայլըր կապ կը պահէ վարժարանին հետ, հայկական ծէսով մատուցուած պատարագին, եւ կ'ըլլայ, վարժարանին մէջ, հայկական ծէսով մատուցուած պատարագին, եւ երեկոյ կը մնայ ընթերցել, յորում եւ արար բարեմաղթութիւն ի բարգաւաճման Մխարանութեանս, զոր սիրէ յոյժ. եւ զի զիտէաք զայն օր լինել ծննդեան իւրոյ, մանկտն արար շնորհաւորութիւն եւ հաճոյ գտաւ նմա» (Ալիշան, 18 Օգոստ. 1859, Փարիզէն, առ Ա. Գ. Հ.): Ալիշանի փափաքին վրայ, Հիւրմիւզեան Աբրահայր շնորհակալութեան նամակ մը կը գրէ նոյն անձին, ինչ որ Ալիշան անձամբ կը տանի եւ կը ներկայացնէ «առ Դայլըր, զոր եւ նախ առանձին ընթերցաւ հաճութեամբ, ապա ի ձայն, ի լուր դանձապետի Բարբար ըն-

Պատասխանատու եւ տաժանալիի աշխատանքը չարաչար յոգնեցուցած էին Ալիշանը, որ աշակերտներէն աւելի կարօտ էր սթափումի ու հանգիստի: Պորիսէն, Հոռմէն ու մանաւանդ Վենետիկէն, բոլոր միաբանակիցները կը մտահոգուէին իր առողջութեամբ, որովհետեւ գիտէին Ալիշանի տկարակալմ ըլլալը, մինչ ինք՝ աշխատանքէն տարուած՝ չ'ուզէր զգացնել իր յոգնութիւնը<sup>89</sup>: Պարզեւարաշխութեան հանդէսը աւարտելուն՝ դեռ չեն յաջողած գտնել գիւղաղնացութեան վայրը, հակառակ որ կը փափաքի մեծապէս «խոյս տալ աւ դադարել ի գեղջ, այլ եւ քիւղ փախչի ի մէնջ, զի վրէպ ել աւ յոյս Վերսայլի, դժուարին լինի դոտանել տեղի յարմար՝ վասն բազմաթիւ մանկըտւոյ. մնամք Նախախնամութեան յաջողելոյ»<sup>90</sup>: Նախախնամութեան վրայ վստահացած՝ կը բացուի իր դիմաց դուռը. չենք գիտեր ինչպէս, բայց այսքանն որոշ է որ վերի տողերը գրելէն երեք օր անդ՝ կ'իմացնէ Աբրահամ, թէ «վաղիւ ընդ առաւօտն, յաջողելով Տեառն, թողցուք զվարժարանս երթալ ի Ֆոնդէնըպլոյ եւ կալ ամիս մի»<sup>91</sup>: Արդարեւ յոգնած է Ալիշան, եւ Փիղիքապէս եւ բարոյապէս. նիւթականի պակասը եւ պարտատէրերու շարունակական այցելութիւնները ընդունելէն ձանձրացած՝ «խուսեմ եւ ցանկայի բնաւ չգառնալ ի Բարիդ մինչչեւ լցեալ զամսօրեայ պաթման գեղջ. այլ հարկ է դառնալ...»<sup>92</sup>:

Ֆոնդէնըպլոյ գիւղաղնացութիւնը կը տեւէ 34 օր (22 Օգոստ. – 25 Սեպտ.), ընդ ամէնը՝ 38 հոգի: Գիւղի ղուարթ օրերուն կը կազմակերպէ օրաղուարձ մը, անշուշտ մօտակայ վայրերը, որովհետեւ հաշուետետրին մէջ կը տեսնենք նշանակուած «չողեկատաց եւ հասարակաց 94.40 Փր., կառաց յերթալ մանկանց ի դրօսանս՝ 34 Փր., մանր ծախք եւ ընձեռէ ի դրօսանս՝ 48 Փր.» : Համեմատութեամբ նա-

կերութեանցն՝ զոր հաստատեալ է, հանդերձ մեկնաբանութեամբք եւ ներդրութեամբք, եւ անբաւ խնդութեամբ ասաց թէ այսպիսի բանք սրբազանի անձին բալասան են վիրաց սրտիս, զոր յապերախտից եւ յանկրօնից ոմանց ընկալեալ եմ եւ վարձք ջանիցս ի բարեբարութիւն (...)» (Ալիշան, Փարիզէն, 22 Սեպտ. 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ):

89. Ինչ որ կը տեսնուի՝ Փարիզի օրն ու ջուրը, ինչպէս նաեւ աշակերտներու հետ չփոխմը մեծապէս նպաստած են Ալիշանի առողջութեանը, որովհետեւ կը գրէ. «վասն առողջութեան իմոյ չունիմ ինչ գանգատել, զի ցարդ չեմ առեալ դեղ ինչ, բայց շաքար կամ օշարակ խիժի ի կակղութիւն կոկորդի եւ կրծոց. եւ հարբուին դուն եւ դուն ուրեք հանդիպի եւ ոչ յերկարէ աւուրս, եւ կարծեմ թէ ընկերակիցք իմ յառողջութեան չեն առաւելք քան զիս: Թուի թէ զբաղանքն ինչ եւ շարժումն՝ եւ ոչ օդ տեղւոյս՝ սատարեն յառողջութիւն...» (30 Մարտ 1859, Փարիզէն, առ Հ. Ա. Ճարեան, Վենետիկ):

90. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 18 Օգոստ. 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

91. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 21 Օգոստ. 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

92. Անդ:

խորդ տարուան՝ աշակերտութիւնը նուազած ըլլալով, «խմորեղէն եւ շաքարեղէն»ի համար ծախսուած է 31.50 Փրանք:

Օգտագործելով գիւղի ազատ ժամանակը, Ալիշան դարձեալ աչքէ կ'անցընէ «Հայկ»ի բնագիրը, «միւսանգամ յաւելեալ ծանօթութիւնս»<sup>93</sup>, որպէսզի քաղաք դառնալուն՝ սկսի տպագրութիւնը. մինչ այդ, Փրանսացի Դայլոր բարեկամը կը խնդրէ «օրինակ մի մաքուր գրութեամբ, ոչ քիտեմ յիւր ընթերցումն՝ թէ կամէր գիւրել ի տիպ»<sup>94</sup>:

Արդեօք Ալիշան սիրա՞ծ էր այս նոր գիւղը՝ Ֆոնդէնըպլոյ, յաջողա՞ծ էր մոռնալ Իտալիոյ բնութիւնը, գիւղերն ու գետակները: Վենետիկէն՝ Հ. Աբրահամ Ճարեան նամակով մը կ'իմացնէ Ալիշանի, թէ Ռափայէլեան վարժարանի աշակերտներով օրաղուարձ մը կատարած է դէպի Մարտաթիքա, ու կը գրդռէ իր գասընկերը՝ գրել իր գաղղիական տպաւորութիւնները, համեմատելով ներկան՝ անցեալին, Ֆրանսան՝ Իտալիոյ... , ու կը յաջողի. «աներկբայապէս գեղեցիկազոյն են վայրքը ջրարբիք եւ գերազնացք քան զանջրդի անտառս անուանեալն Գեղեցիկ Աղբիւր (Ֆոնդէնը Պէլ), թէեւ գեղեցիկ եւ սա եւ ընդարձակ յոյժ, եւ տեսարանք բազմադիպիք անհնգեղ ժայռից եւ ուղտուքարաց, եւ բազմադարեայ ահեղ ստուարաբուն եւ կոթողաձեւ կաղնեաց, որպիսի բնաւ ուրեք ոչ տեսաք այդր, եւ ոչ իսկ յայլ կողմանս Գաղղիոյ գտանին. այլ որպէս ասես՝ ջուր չկայ, ջուր բազում, սահել տրքել եւ զսրտի տաղտուկս... , եւ դուն ուրեք հորիզոն ընդարձակ հոգւոյ. իսկ ո՞ւր ծով, ծով ալէկոծ՝ բազում ալեաց ներքնոց հանդուցիչ: Չայստիկ ողջունեալ՝ բիւր անգամ եւ մի անգամ միայն զշաղակրատն Պրեկանցա...»<sup>95</sup>:

Ծո՞վ, ծո՞վ կ'երգէ՝ ծովի վրայ ապրող, ծովի կարօտ հոգին. Վենետիկ եղած էր իր օրրանը եւ անկէ քաժնուած ատեն ողջունած էր զայն՝ «ողջամբ մնայ երկրորդ իմ հայրենիք» ըսելով, մինչ ծովը «իբրեւ իշխանութիւն առեալ ի յաւիտենական քախտէն՝ պերճանայր եւ զօրանայր լայնաթաւալ ալեացն երբեմնեան շարժմամբ»<sup>96</sup>, ու նետած էր զինքը օտար ասիեր, օտար հորիզոններ: Ո՞վ գիտէ, քառամեայ պանդխտութեան մէջ՝ Ալիշան քանի՞ քանի անգամներ երազած է ծովը, պատուհանէն ուզած է լսել ալիքներու ձայնը. «է ինչ, կը գրէ Հ. Ճարեանի, որում կարօտիմ եւ փափագեմ եւ ոչ գտանեմ, եւ հուպ առ քեզ կայ. Ծով, Ծով, Ծով, եւ այս առաջին անգամ է ի կեանս իմ ու ամիսս չտեսանել զԾով. եւ յորժամ յիշեմ զծովահայ-

93. Ալիշան Հ. Ղ. Ֆոնդէնըպլոյէն, 1 Սեպտ. 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

94. Անդ:

95. Ալիշան Հ. Ղ. Ֆոնդէնըպլոյէն, 16 Սեպտ. 1859, առ Հ. Աբրահամ Ճարեան, Վենետիկ:

96. Օրագրութիւն Ալիշանի:





գոհանայ գրելով «Թէպէտ ի քաղաքիս փակեալ են թատերք, առ մեզ այսր ի վարժարանիս պատրաստութիւնք են»<sup>104</sup> :

7.— Թէեւ ամէն ուսումնական տարւոյն փակուամբ հրճուանքի օր մըն է, սակայն 1860 տարին կրկին նուիրականութիւն կը ստանայ Մուրատեան վարժարանի համար, որովհետեւ ծննդեան հարիւրամեակն է վարժարանի բարերար Սամուէլ Մուրատեանի: Ապրիլ ամսուն արդէն Ալիշան կը մտածէ փառաւորել յիշատակը ազգային մեծ բարերարին, ու կը համարձակի Վենետիկէն հրասիրել Հիւրմիւլդեան Աբբահայրը. «չիցէ՞ մարթ եւ Վեհի յայց ելանել փոքու հօտիս (...), մանաւանդ զի եւ այս հարիւրերորդ ամ է ծննդեան Սամ. Մուրատայ, եւ արժան է հանդիսադոյն կատարել զյիշատակ նորա»<sup>105</sup> :

Օգոստոս 5ին կատարուած ամալերջի հանդէսին վը նախագահէ Գաղղիոյ ծովապետ (Contre-amiral) Մարթիէօ. երաժշտական մասը կը կատարեն «չորք յաշակերտաց վարժարանին, երկու բամբուկի (Փորդէբիանոյ) գործեաց վրայ՝ ութ ձեռք ընտանի նուազներ զարկին»<sup>106</sup> : Բեմ կը բարձրանայ Ալիշան եւ քեղեցիկ ճառախօսութեամբ մը, գաղղիներէն լեզուով, կը դրուատէ օրուան յիշատակը՝ յանձին վարժարանի բարերար Սամուէլ Մուրատեանի. ճառախօսութեան ընթացքին՝ կը յիշէ թէ նոյն տարին նոյնպէս դարադարձն է գերմանացի մեծ բանաստեղծ Շիլլերի ծննդեան, եւ որով երկու յորելեարներուն մէջ կը դառնէ հասարակաց գիծեր<sup>107</sup> : Ապա խօսք կ'առնէ նախագահ ծովապետն «գինուորական աշխուժիւ պատասխանելով՝ յոր-

104. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 31 Յունի. 1860, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

105. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 25 Ապրիլ 1860, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

106. «Բազմավէպ», 1860, էջ 289:

107. Ալիշանի այս բանախօսութիւնն ալ «Հայկ»ի նման, Փրանսերէն լեզուով կը տպագրուի Փարիզի մէջ. բայց որովհետեւ տպագրութեան օրերուն ինք բացակայ էր ու ամսուան մը համար զացած էր Վենետիկ, վերադարձին կը տեսնէ վրիպակները ու կը սրտնեղի. «չատը եւ մեծամեծք են (վրիպակքն)»,... եւ զի են որք խնդրեն յինէն, եւ ես ամառնեմ տալ զսղախտիսն» (12 Դեկտ. 1860, Փարիզէն, առ Հ. Համազասպ Թերճիմանեան, Վենետիկ). ուստի կը խնդրէ որ վերապուի Ս. Ղազարի մէջ գոնէ 200 օրինակ ու կէսը զրկուի իրեն: Հ. Համազասպ, «Բազմավէպ»ի Խմբագիրը, կը խնդրէ Ալիշանին որ «Մուրատ»ը, հայերէն թարգմանութեամբ, հրատարակուի «Բազմավէպ»ին մէջ. Ալիշան հակառակութիւն չունի, «մանաւանդ թէ ետու զայն թարգմանել ի հայ եւ հզի յարկիւն գրոցն, զոր առաքեմ քեզ» (Անդ): Գրութիւնը հրատարակուած է «Բազմավէպ»ի մէջ, ԺԺ. (1861), Թ. 1, էջ 5-18: Տպագրութեանէն քանի մը ամիս ետք, Գերպ. Եղուարդ Հիւրմիւլդ Պոլսոյ մէջ կը կարդայ զայն ու շնորհաւորական կը հասցնէ Ալիշանի, որ զարմացած կը պատասխանէ. «Ոչ գիտեմ զո՞ր բանախօսութիւն ընթերցեալ իցէ Սրբութեանդ ի Բազմավէպին, Թուի թէ իմ իցէ, տարեկան հանդիսին ի Մուրատ, որ հնացեալ է առ մեզ. երեւի թէ քննարկն զաղղիարէն ոչ ունիք. եւ եթէ ներէք՝ առաքեցիք ի Հոռոմ ի դարձին Սրբութեանդ անդ, զի գիտէք մեծարել եւ զայդպիսի մանունս» (1 Մայիս 1861, Փարիզէն, առ Գերպ. Եղ. Հիւրմիւլդ, Պոլիս):

դորեց զաշակերտս ի յարատեւութիւն ջանից յուսով աստուածային օգնականութեան, որով ես ալ, կ'ըմէք ի տղայութեանս անօգնական տառապեալ մ'էի, այս աստիճանիս հասայ»<sup>108</sup> :

Պաշտօնական հանդէսին եւ մրցանակաբաշխութեան կը յաջորդէ երկրորդ հանդէս մը, աւելի ջերմ ու ընտանեկան, ցոյց տալով անկեղծ երախտագիտութիւն մը մեծ բարերարին հանդէպ: Նոյն գիշեր, վարժարանի պարտեզին մէջ կը կատարուի լուսավառութիւն եւ հրախաղութիւն, որու արտաքին գեղեցկութիւնն ու տպաւորութիւնը այնքան ազդեցիկ ու մեծ է հղած՝ որ Ալիշան կը համարի «այն օրն եւ այն գիշերն անմոռաց պիտի ըլլան Մուրատայ սանից եռանդուն եւ երախտագէտ սրտից մէջ, եւ հաճոյալուր պատմութիւն մը իրենց որդւոց եւ թոռանց, որք թերեւս բախտ պիտի ունենան Մուրատայ մահուան եւ վարժարանի բացման դարադարձերն ալ կատարելու աւանդան եւ վարժարանի բացման դարադարձերն ալ կատարելու աւանդան հանդիսապէս, եւ այսօրուան հանդիսադրացս հողացեալ նշխարաց վրայ արտասուեալստն գոհութեամբ աչք մը տալով, վերցընել զայն հոն՝ ուր որ կը տեսնեմք ազգերնուս ճշմարիտ սիրողաց եւ բարերարաց երանեալ հոգիները, զմայլած իրենց երանաշնորհ եւ երկրաշահ արդեանց եւ մխիթարութեանց մէջ»<sup>109</sup> :

Այս էջը փակելէ առաջ՝ կ'ուզենք բանալ փակագիծ մը, տալու համար նկարագրութիւնը այս պատմական դարադարձին հետ կապուած ուրիշ հանդէսի մը, նոյնպէս նուիրուած վարժարանի բարերարներուն, բայց կազմակերպուած՝ ո'չ թէ Ալիշանէ, այլ Ալիշանի շունչով եւ հոգիով անած նախկին սաներէ, որոնք կեցցէներով եւ իր բաժակներով կը փառաւորեն զոյգ վարժարաններու բարերար Մուրատն ու Ռափայէլը, ինչպէս նաեւ իրենց անմահ դաստիարակը՝ Ալիշանը: Հանդէսը կատարուած է Պոլիս, ու նկարագրողն է Սերուբէ, 13 Յունուար 1860 թուակիր նամակով, ուղղուած իր եղբոր՝ Հ. Ղեւոնդ Ալիշանի.

«Յունուար 7/19 Մուրատեան եւ Ռափայէլեան ընկերութեան տառեկան հանդէսի օրն որոշուած ըլլալով, նախ առաւօտն Ս. Երրորդութեան եկեղեցին ի Բերա, հանդիսաւոր պատարագ եւ պաշտօնեղաւ, զոր Աղգապետ Պատրիարքն՝ Վ. Նիկողայոս վարդապետն մատոյց, ի յիշատակ հոգւոց երկուց բարերարաց Աղգային դպրոցաց: Վարժարանի հին եւ նոր աշակերտաց հանդիսադիր խումբը եկեղեցւոյն դասը եւ առաջակողմը բռնած էին, վայելչապէս հաղուած եւ պատկառանք շարուած, որ տեսողաց փրնար քարի ազդեցութիւն մը ընել: Ժողովրդեան բուռն բազմութիւն մը եկեղեցւոյն ուրիշ կողմերը լեցուցեր էին:

108. «Բազմավէպ», ԺԸ. (1860), Թ. 10, էջ 289-290:

109. Անդ, էջ 290:

«Իրիկուան ժամը Յին նոյն ակումբը քաղքիս Բերայու քաղինոյի մը դահլիճը չքեղապէս կը տեսնուէր: Ջահաւորեալ սրահին մէջ որ իր որմնակարկառ հայելիներով եւս լուսադարձեալ էր, եօթանասունէ աւելի Մուրատեանց եւ Ռափայէլի վարժարանաց աշակերտներ, սակաւաթիւ հրաւիրեալք ալ քիչ մը ուրախապէս ճեմելէն վերջը, սրահին չորս դին եղերած աթոռները բաղմեցան: Ճակատը բոլոր սեղանի մը առջեւ նստած էին Ընկերութեան նախագահը, Պատ. Մկրտիչ Վրժպ. Պեշիկթաշեան, քարտուղարը՝ Պրն. Թովմաս Եսայեան, Պրն. Սրապիոն Հէքիմեան, Պրն. Գէորգ Ինճիճեան: Ոտք ելաւ նախագահն եւ ճառ մը խօսեցաւ աշխարհաբար, ի յիշատակ բարերարացն եւ օրուան հանդէսին յարմար եւ իր նախագահութեանը արժանաւոր, ուր առաւել իր դրագիտական հանճարը կ'երեւար: Աւարտեց եւ չորս եղերքէն դահլիճը ծափահարութեամբ շարժեց:

«Ոտք ելաւ ապա աշակերտացմէդ Պրն. Թովմաս Եսայեան, եւ խորին զգուշութեամբ Աստուծոյ մեծութիւնը երախտադիտական նըւէրով մը սկսելով, օրուան հանդիսին յարմարեցուց խօսքը, բարերարաց արդիւնքը հռչակելով, եւ շարունակեց իրեն սեփական վառվռոտութեամբ, մաղթելով ի վերջոյ աղգին մեծատանց որ նմանողը ըլլան բարերարաց. աւարտեց եւ դարձեալ թնդաց դահլիճը չորեքկարգեան պարմանեան ծափահարութիւններէն:

«Ելաւ Գարագաշեան Պրն. Կարապետ. առաջին անգամ ատենախօսելուն համար՝ վայելչապէս ունկնդրաց ներողամտութիւնը խընդրելէն վերջը, պարզաբան, խոհական եւ գեղեցիկ ճառ մը խօսեցաւ, որով իր դալար հանճար մը ըլլալը դուրս ցատկեցուց երկիւղած ձայնին մէջէն: Նստաւ եւ նորէն սրտապինդ ծափահարութիւնք կնքեցին իր խօսքերը:

«Միւս աշակերտ մը քու սաներէդ, հարիւրապետն Պրն. Գէորգ Սամանճի ոտք ելաւ: Միւս երեք ճառերէն վերջը իմացուց որ իր յորդառատ սիրտը ունէր գեղեցիկ եւ վսեմ խօսքեր՝ բարերարաց արդիւնքը եւ իրենց եղած բարերարութիւնը քերթողական ձեւերով հռչակելու: Վերջացուց իր շողշողուն խօսքերը եւ ծափեց միասիրտ բոլոր աշակերտաց շրջանը:

«Ասոնցմէ վերջ Հէքիմեան Պրն. Սրապ դրաբար չափաւ յարմարապէս գինիին բաժակը երգեց եւ ներս մտան շամբանիայից դաւաթները: Առաջին Կեցցէն, ընկերութեան նախագահը բերաւ, Օգոստոսիառ Ինքնակալին կենացը՝ Սուլթան Ապտիւլ Մէճիտ խանին: Կեցցէ գոչեց համօրէն ժողովը եւ հետեւեցան միւս Կեցցէներ՝ ի յիշատակ բարերարաց, բարիացապարտ վարժապետաց, նախադահ եղիսկոպոսին, վեհափառ Աղգապետին:

«Երկայն կ'ըլլայ խրախճանին զուարթութեան կարգը մի ըստ միոջէ նկարագրել (...): Թէ որ անկիւնէ դիտէիր տեսարանս, հար-

կաւ սիրտդ Ահա ես եւ մանկունք իմ ըսելով պիտի խրախանայր, մանկտին զոր վարժեցիր՝ տեսնելով հիմա սպրկիկ երիտասարդներ ձեւացած: Մէջերէն մէկը, ասպետական փոքրիկ դէմք մը, որ Եւրոպիոյ միջին դարու գլուխ մը յիշեցնէր, Թերզեան մականունեալ, դաւաթը շարժեց քու կենացդ եւ Կեցցէ գոչեց խել մը»:

Հոս կը փակենք այս երկար փակագիծը, որ վրցածնուս չափ համառօտեցինք՝ չհեռանալու համար պատմութենէն, ու կը դառնանք շարունակելու նկարագրել Մուրատեան վարժարանի կեանքը, միշտ Ալիշանի շունչին տակ:

8.— 1859—1860 ուսումնական տարւոյն շրջանաւարտները, Հ. Քերովբէ Իֆրաղճեանի ընկերակցութեամբ, վը մեկնին Փարիզէն՝ Օգոստոս 8ին դէպի Պոլիս<sup>110</sup>, մինչ մնացած աշակերտութիւնը, թուով շուրջ 50 հոգի, կ'ուղղուին Փոնդէնդլոյ, կատարելու համար իրենց արձակուրդը: Համեմատաբար՝ անցեալ տարիներու ծախսերը կը կրկնապատկուին, որովհետեւ թէ՛ բաղմաթիւ են աշակերտները, եւ թէ՛ սովորականէն երկար կը տեւեն հանգիստի օրերը: Մախսերուն մէջ աչքի կը զարնեն Ալիշանի ձեռագրով նշանակուած՝ «խաղալիք մանկանց 10 Փր., մանր ծախք ի գրօսանս 56.10 Փր., խմորեղէն, շաքարեղէն, շաքար, չիգուրդա 107.40 Փր.»<sup>111</sup>:

Իրեղապնացութեան ընթացքին՝ Ալիշան կը հրաւիրուի Վենետիկ, մասնակցելու Միաբանութեան ընդհանուր ժողովին, այնպէս որ՝ գիւղ ձգելով ամբողջ հասարակութիւնը, Սեպտ. 5ին կը մեկնի Վենետիկ: Բաժանումը՝ թէեւ քանի մը օրուան համար՝ միշտ կսկիծ եղած է Ալիշանի: Նոյն օրը յուշատետրին վրայ նշանակած է. «5 Սեպտ. 1860, հրաժեշտ ի մանկանցն ի Փոնդէնդլոյ յ'9 ժամ առաւօտու»: Երկու օր ետք, Սեպտ. 7ի երեկոյեան ժամը 10ին կը հասնի Վենետիկ, կը բախէ Ռափայէլեան վարժարանի դուռը, ուր ժամանակին թագաւորած էր եւ սիրած, ու դեռ ներկայիս կը սիրէր ներսի

110. Հայրենադարձ հինգ աշակերտներէն՝ Յարութիւն Չամչեան կը դառնար հիւանդութեան պատճառով. միւս դարձողներու մէջէն Տիգրան Տոմինեան, վարժարանէն բաժնուելու օրը կարգացած է ինքնագիր քերթուած մը «Ողջոյն հրաժարական առ Մուրատեան վարժարան» վերնագրով, ուր խօսքը յատուկ կերպով կ'ուղղէ իրեն Դաստիարակ Ալիշանի, գրելով.

«Ո՛հ յիշեցից յայնժամ զաւուրս իմ նախկին  
Ըզմտերմաց պարն յիշեցից կաթոգին,  
Ջսիւզն յիշեցից ըզբարտիս քաղցրաբոյր.  
Եւ անմոռաց, ո՛հ, յիշեցից յաւէտ չօր  
Ջառաւելեալ օէրն եւ գորով գըթալի»:

Քերթուածը իր ամբողջ երկարութեամբ հրատարակուած է «Բաղմալէպի» մէջ, ԺԺ. (1861), Թ. 2, էջ 38-40:

111. Օրագրութիւն Ալիշանի:

բնակիչները, մանուկները եւ անոնց տեսուչ Հ. Աբրահամ Ճարեանը. եւ սակայն, այդ ուշ գիշերին, Ռաֆայելյան վարժարանի դուռը «չբացաւ» կը դրէ Օրադրութիւնը, ու վը ստիպուի դիշերօթել «ի Լուսնա պանդոկի»: Յաջորդ օրը, առաւօտեան ժամը 7.30ին «մտի ի վանս, մինչդեռ Վեհ եւ քահանայը ելանէին յառաւօտեան ժամերգութենէ. պատարագ գոհութեան ի սեղան Սրբուհւոյն»<sup>112</sup>:

Վանական ընդհանուր ժողովի ընթացքին՝ Ալիշան խօսած պէտք է ըլլայ Մուրատեան վարժարանի աշակերտութեան թիւին մասին, նորեր ընդունելու կամ չընդունելու հարցին մասին: Ինչ որ կը նըշմարուի՝ խօսք քացուած պէտք է ըլլայ նաեւ Ալիշանի անձին մասին, պահելու համար զինքը Ս. Ղազար, փոխարէն փարիզ զրկելով նոր տեսուչ մը: Ասիկա վը կռահենք Հիւրմիւղեան Աբրահամ մէկ ալիւնարկէն, ուղղուած Ալիշանի, ուր խօսքը ուղղելով աշակերտներուն՝ կ'ըսէ. «ոչ ինչ երկբայիմ զի առաւել եւս խրախուսեսցին արդ ի զարգացումն տեսութեամբ եւ միտքարութեամբ Տեսչին փրեանց եւ Հօր, զոր առ սէր նոցա եւ յօգուտ նուիրեաց դարձեալ Միաբնութիւնս»<sup>113</sup>:

Ալիշան, 1860ի Հոկտ. 6ին կը թողու Վենետիկը: Համառօտ Օրադրութենէն կը քաղենք մանրամասնութիւններ Ալիշանի ուղեւորութեան պահերէն. «8 Հոկտ. գրեցի զանուանա աշակերտաց առ ջըրվէժի Պրեննեայ»։ «9 Հոկտ. Պաւառիտ. տօն էր քաղաքին կամ թագաւորին, վասն որոյ հանդէսը եւ հրացանութիւնը»։ «10 Հոկտ. ժամ 10.30 մուտք ի Մուրատեան վարժարան»։ Ո՛վ գիտէ ո՛րքան ուրախացած պիտի ըլլան աշակերտները՝ տեսնելով իրենց Տեսուչը, դաստիարակը եւ հայրը. փոխարձարար՝ ամսուան մը բացակայութեան ընթացքին ո՛րքան անձած պիտի ըլլայ Ալիշանի կարօտը, որ գոհունակութեամբ կը ծանուցանէ Աբրահամ. «գոթի զամենեւին զՊ. գործակիցսն իմ եւ զմանկտին ի քաջողութեան եւ յանդորու, եւ ի գոհութեամբ զմիմեանց. վասն անչիոթ եւ անխոռով քաղաքավարութեան ի ժամանակի բացակայութեանս, զոր եւ ի փորձոյ ակն ունիմ հաւատտել»<sup>114</sup>: Երկու տարուան ընթացքին՝ տերտացած էր կապը ընդմէջ Ալիշանի եւ աշակերտներուն, այնպէս որ Ալիշանի բացակայութեան՝ աշակերտները կ'ընդեն ընդունիլ զինքը անակնկալ հանդէսով մը. «միտլ աւուրբ կանխեցի քան զակնկալութիւն նոցա, որով եւ զընտանեկան խնդութեանն. եւ այնու խրախուսեալ յորդորագոյն պարապին յուսմունս յոր արդէն սկիզբն արարեալ էր»<sup>115</sup>:

112. Անդ:

113. Հիւրմիւղեան Աբրահայր, Վենետիկէն, 20 Հոկտ. 1860, առ Հ. Ղ. Ալիշան, փարիզ:

114. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 12 Հոկտ. 1860, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

115. Անդ:

9.— 1861 տարւոյն՝ զանց կ'ըլլան վարժարանին մէջ բարեկենդանի թատերական խաղերը «առ խնայութեան»<sup>116</sup>, ու կը կատարուի միայն ամառը զի պարզեւաբաշխութեան հանդէսը: Ալիշանի համար վերջին տարին էր, որուն անշուշտ տեղեակ էր ինքը: Օրուան նախագահն էր Միաբնութեան Ընդհանուր Աբրահայրը՝ Գէորգ Արքեպս. Հիւրմիւղեան, որ այս անգամ զիջելով Ալիշանի աղաչանքին՝ յանձն առած էր զալ Վենետիկէն, ամսուան մը համար<sup>117</sup>: Օրուան բանախօսը դարձեալ վարժարանի տեսուչն է, Ալիշան, «որ իրեն քերթողական եւ բանիբուն աշխուժովն եւ հայրենասիրական եռանդեամբը նոյնիսկ օտարազգեաց սիրտը վառեց, իրեն Հայաստանի հանքաբանական, բուսաբանական եւ վեղանական հարստութեանցը փայլազաղիական լեզուով խօսած ճառովը»<sup>118</sup>: Զանազան մրցանակներու բաշխումէն ետք՝ յատուկ կերպով կը փայլէին եւ «հասարակաց գո-վեստի արժանի էին Տամատեան Պ. Յակոբին իւզաների ծովային

116. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 31 Յունիւ. 1861, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

117. Նախորդ տարին Ալիշան փափաքած էր որ Աբրահայրը այցելէր փարիզ. «Գալուստ Վեհիդ ամենեցուն մեզ ցանկալի է, եւ շնորհս ունեւը Միաբնութեանս՝ եթէ առնոր յանձն զբացակայութիւնը զամիսս ինչ» (Ալիշան, Փարիզէն, 8 Մայիս 1860): Անկարելի էր իրագործել Ալիշանի փափաքը: Յաջորդ տարին (1861), Ալիշան կը համարձակի կրկնել խնդիրը, որպէսզի Աբրահայրը ճեղքկայ գտանելով տարեկան հանդիսի վարժարանին եւ տեսանել զսա ի բացմու-թեան որդեկացն, եւ փոխանակ միոյ ամին զնշխելոյ՝ պարզեւել զնպատ օրհ-նութեանց. միանգամայն եւ ինքեան փոքր մի ոգի առնուլ օղափոխութեամբ: Վաղու խորհեալ էր մեզ զայս առաջարկ, այլ երբեմն կասկած քաղաքական չփոթից եւ յետոյ անակնկալ արձակուրդ աշակերտաց՝ կատեցուցին. եւ այժմ, թէն փոքր մի անագան, համարձակիմք առաջի առնել եւ Վեհիդ եւ ժողո-վոյդ, մնալով վաղ ծանօթութեան կամաց նոցին եւ Տեսան» (19 Յունիս 1861, առ Ա. Գ. Հ. Վենետիկ): Աբրահայրը կը պատասխանէ Վենետիկէն. «Թէպէտ չիցէ ինձ գիւրին հրաժարել ի տեղւոյնս եթէ՛ վասն պէսպէս գործոց Միա-բնութեանս եւ եթէ՛ վասն դանդաղութեանն՝ զոր առաւելութիւն հասակին գիտէ անել, բայց ի հաճել զորդիտդ իմ եւ զիս եւս միտքարել, յանձն առի զուղեւորութիւնն» (25 Յունիս 1861, առ Ալիշան): Ալիշան չափազանց զոհ կը մնայ եղած կարգադրութենէն, եւ վը յանձնարարէ Աբրահամ զգապա եպիս-կոպոսական, այսինքն՝ զմիփոքոն, եւ թէ մարթ է՝ զգաւազան բերցէ Վեհի, քահանայապետել ի տօնի վերափոխման, եւ թէ հաճեսցի՝ շնորհել եւ Պ. Հ. Սուքիասայ, որպէս ընկերակցացն, զվարդապետական գաւազան» (29 Յունիս, 1861):

118. «Բազմավէպ», ԺԺ. (1861), Թ. 8, էջ 248: Ժառանգութեան հայերէն թարգ-մանութիւնը հրատարակուած է «Բազմավէպ»ի մէջ (1861, Թ. 10, էջ 311-325, Թ. 11, էջ 347-357): Սերովբէ Ալիշան կը կարդայ այս ճառը եւ Պոլիսէն Ս. Ղազար կը հասցնէ ձայնը. «Ընդունեցայ սիրով, ընթերցայ համով, որ մե-ռեալ կենացս կարծես կենդանութիւն տուաւ: Թէ չի թնդար ասով Հայոց տիրու, ապա թնդալիք չունի» (25 Յունիւ. 1862). ապա երկու էջ կը կատարէ իր անձնական դիտողութիւնները, մանաւանդ նկատմամբ հանքային քարերուն եւ անոնց հայերէն անուններուն:





նական տարւոյն՝ աշակերտութեան թիւը 33 է<sup>127</sup>, որոնցմէ հինգը շրջանաւարտ ըլլալով՝ 18 Օգոստոսին (1859) կը մեկնին Պոլիս<sup>128</sup>, ու աշակերտութեան թիւը կը վերածուի 28ի: Արդարեւ՝ աչքի կը զարնէ աշակերտութեան սակաւութիւնը, բայց միւս կողմէ քաղաքական պայմանները այնքան վատ էին՝ որ եկամուտները օրը օրին վը նուազէին եւ սղութիւնը կ'աճէր: Եղած 28 աշակերտներէն «են եւ թոշակաւորք տասնիւ չափ»<sup>129</sup>, մնացած 18ը ճրիւղարժ են, որոնց համար ամսէ ամիս կեդրոնական մատակարարութենէն կը հասնէր 4.000 Փրանք, որ պիտի բաւէր ոչ թէ միայն 18 ճրիւղարժ, այլ նաեւ թոշակաւոր աշակերտներուն համար, որոնք կ'ամ ամենեւին չէին վճարեր եւ կամ հազար նեղութիւն տալով կը հասցնէին գումարը կաթիլ կաթիլ: Բնականաբար, Ալիշան չէր կրնար գոհանալ 28 աշակերտներով. վարժարանի վարկն ու պատիւը վեր բռնելու համար կ'ողջէ աւելցնել անոնց թիւը, սակայն Երկսայրի սուրի մը դիմաց գտնուելով կը տատամսի ընտրութեան մէջ:

Այս անել կացութեան մէջ՝ կը մտածէ աւելցնել գոնէ թոշակաւորներու թիւը, որպէսզի լեցուի վարժարանը «զորոյ մեծութիւն եւ հոյակապ չինածն տեսնալ հարցանեն պէսպէս բարեկամք զթիւ ուսանողացն»<sup>130</sup>: Բայց ինչ որ կը տեսնուի, 1859–1860 ուսումնական տարւոյն համար անհնար կ'ըլլայ Պոլիսէն բերել տալ նոր աշակերտներ, «նախ զի դժուարագիւտ ասեն թոշակաւորք, եւ երկրորդ՝ զի զառաջին գտնալսն կամ գտանելիս սահմանաւ է վասն Ռափայէլեան վարժարանի»<sup>131</sup>: Ուրեմն, գործնականին մէջ, 1859–1860 ուսումնական տարին Մուրատեան վարժարան կ'ունենայ 28 աշակերտ, թիւ մը՝ որմէ գոհ չէ Ալիշան, մանաւանդ թէ մտահոգ է, որովհետեւ

127. 1858–1859 ուսումնական տարւոյն ընթացքին՝ վարժարանը կը թողուն ֆօրթուգրեան եւ Ասլանովիչ, որոնք իրենց հայրերուն հիւանդութեան պատճառով ետ կը կանչուին. կը թուէ նաեւ զԹաւուք(եան) վասն լրման ժամանակին, զԳարազաշ(եան) վասն կարեւոր հիւանդութեան, զԳրիգոր Տամաթ(եան) վասն խեղութեան» (Ալիշան, 22 Մարտ 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ):

128. «Յառաջիկայ հինգշաբթի զարձայն ի Կ. Պօլիս պատանիք հինգ, Գապարաճի, Այսրն, Նիկողիմոս, Փուլճի եւ Ենեստ Տէր Դաւթեան. յետինս վասն տկարութեան մարմնոյ» (Ալիշան, 12 Օգոստ. 1858, առ Ա. Գ. Հ. Վենետիկ):

129. Ալիշան Հ. Ղ. Ֆոնդէնըպլոյէն, 16 Սեպտ. 1859, առ Հ. Աբրահամ Ճարեան, Վենետիկ:

130. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 12 Օգոստ. 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

131. Ալիշան Հ. Ղ. Ֆոնդէնըպլոյէն, 22 Սեպտ. 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ: Դժուար էր Պոլիսէն թոշակաւոր աշակերտներ գտնել թէ՛ Փարիզի եւ թէ՛ Վենետիկի վարժարաններուն համար, որովհետեւ ծնողները թոշակը վճարելու պարագային՝ կը նախընտրեն «տալ զորդիս իւրեանց թոշակաւ ի պոլսական դպրոցս, հանդէպ աչաց իւրեանց ունելով զնոսա, քան թէ այդը կամ այսր առաքել» (Աբրահ. Հիւրմիւզեան Վենետիկէն, 7 Հոկտ. 1859, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ):

վարժարան մտնելուն՝ տեսած էր շուրջ 40 աշակերտներ, եւ եթէ 1860ին մեկնէին շրջանաւարտները՝ վարժարանը կը մնար դատարկ: Ուստի, ուսումնական տարին չաւարտած՝ հետամուտ կ'ըլլայ բերել տալ նոր աշակերտներ 1860–1861 տարեշրջանին համար, որովհետեւ, գործնականին մէջ, կը տեսնէ որ աշակերտներուն նուազելով՝ վարժարանի ծախսերը համեմատական կերպով չեն նուազիր. «սուղ ինչ առաւելութիւն կամ նուազութիւն թուոյ աշակերտաց չգործեն յայսմ մեծ զանազանութիւն, որպէս եւ բնաւ ոչ ի ծախս վարժապետաց, որով սակաւ ինչ չահիմք ի նուազման աշակերտաց (...), վասն որոյ եւ ինդիր է մեր մի՛ սպասել մինչեւ յաշուն, այլ յառաջիկայ դարնայնումս տալ բերել դաս մի կամ կէս դաս մանկանց (...). եթէ առ խառնակութեան ժամանակիս՝ սպասեցուք, թերեւս առաջիկայն պղտորագոյն յայտնեսցի եւ մնացուք մեք միշտ նուազօք եւ միշտ նուազելով»<sup>132</sup>:

Խելացի էր առաջարկը, արդարացի էին բերուած պատճառները, որով Հիւրմիւզեան Աբրահայր չէր կրնար հակառակիլ, մանաւանդ որ տեսուչն էր վարժարանին պատասխանատուն. որով թոյլ կու տայ որ Ալիշան գործէ ազատութեամբ, միայն թէ իր կողմէ կ'առաջարկէ «առնելոյ մանկունս երկոտասան, կէս ճրիւղարժս եւ կէս թոշակաւորս»<sup>133</sup>, որպէսզի ամբողջ ծանրութիւնը չմնայ Միւրատեան վարժարանի<sup>134</sup>: Ալիշան գոհ ըլլալով եղած կարգադրութենէն, կը գրէ Պոլիս՝ Միւրատեան վարժապետներու, որպէսզի պատրաստեն 12 մանկներ, Մուրատեան վարժարանի համար, ու պատասխան կը ստանայ թէ փոխանակ 12ի՝ կը պատրաստուին 14 հոգի, «որք հասցեն այսր (ի Փարիզ) ի վերջ կոյս ամսոյս»<sup>135</sup>. շրջանաւարտներուն մեկնելով ու նոր հասնելիք աշակերտներով՝ յաջորդ ուսումնական տարւոյն համար «մնացեն յայտնեսեալ քառասնիւ չափ»<sup>136</sup>, ինչ որ աւանդական թիւն է վարժարանին համար: Մայիս 26ին (1860) Պոլիսէն Փարիզ կը ժամանէ Հ. Մանուէլ Քաջունի, ո'չ թէ 12 աշակերտներով, ոչ ալ 14ով, այլ «17 մանկամբ» (...), զերիս ի նոցանէ գրտանեմ տակաւին տասնամեայս, յորոց սակի են եւ այլք. եւ այս չէր ըստ ըզճից եւ ակնկալութեան մերոյ»<sup>137</sup>: Նոր աշակերտները երե-

132. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 13 Փետր. 1860, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

133. Հիւրմիւզեան Աբրահայր, Վենետիկէն, 26 Փետր. 1860, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ:

134. Բացի Ալիշանէն՝ Հիւրմիւզեան Աբրահայրն ալ կը գրէ Պոլսոյ Միւրատեան Հայրերուն, որպէսզի «պատրաստեսցն վասն վարժարանիս մանկունս երկոտասան, թոշակաւորս եւ անթոշակս, զի յետ Զատիկին, ի մեղմանալ օդոցն եւ հողմոց՝ յղեսցեն» (30 Մարտ 1860, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ):

135. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 8 Մայիս 1860, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

136. Անդ:

137. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 27 Մայիս 1860, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

ւան կը հանեն նոր հարցեր. 17 անհաւասար տարիքով տղաքներ դընել մէկ դասարան՝ չափազանց է, եւ ունի իր անպատեհութիւնները. երկու դասարանի վերածելու պարագային՝ սակաւաթիւ կ'ըլլայ փոքր խումբը, «եւ հարկ լիցի նոցա ոչ պակաս քան զուրթ ամ մնալ աստէն»<sup>138</sup>. ուստի, Ալիշան կը մտածէ նոր լուծում մը, այսինքն՝ աշխան ընդունիլ ուրիշ երեք կամ չորս աշակերտներ, հաւասարակշռելու համար կացութիւնը<sup>139</sup>: 1860ի աշխան Պոլիսէն կը հասնին նոր աշակերտները, փոխանակ երեք կամ չորսի՝ եօթը պատանիներ. այսպէս, Ալիշանի փափաքը առաւելօքն կատարուած էր, եւ 1860-1861 տարեշրջանին համար ունէր 48 աշակերտ, այնպէս որ այլեւս նոր աշակերտներ ընդունելու կողմնակից չէ, վախճալով որ տուժէ վարժարանին բարեկարգութիւնը. ու երբ կ'իմանայ որ դեռ դիմումներ կը կատարուին Պոլիսէն, իսկոյն կը գրէ՝ կասեցնելու համար անոնց ընթացքը, որպէսզի «մի' տաղտուկ եւ տաղնապ հասցէ մեզ եւ այլոց»<sup>140</sup>:

1861ի Օգոստոս ամսուն՝ Մուրատեան վարժարան կ'ունենայ 14 շրջանաւարտներ<sup>141</sup>. պատկառելի թիւ մը՝ որ տարիներէ ի վեր վարժարանը չէր ունեցած: Այլիւ ամիսէն իսկ Ալիշան հետամուտ է վաճառել կերպով ճամբայ դնել զանոնք դէպի Պոլիս, ընկերակցութեամբ Միխիթարեան վարդապետի մը, որովհետեւ «ո'չ ծնողաց եւ ո'չ նաւորացն փ մասին կարծեմ վաճառել Երեւանցի անառաձնորդ ուղեւորութիւնն, եւ ո'չ վարժարանիս եւ եղելոցս ի նմա պատիւ, յետ տարածամ արձակմանն՝ եւ միայնակս թողուլ (...). յետ տասն ամաց այս առաջին նուազ է զի բազմութեամբ եւ ողջոյն դաս դառնայ, եւ հարկ է վարժարանիս ոչ սակաւ անփոքր եւ անտարբեր երեւել»<sup>142</sup>:

138. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 18 Յունիս 1860, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

139. Երեք կամ չորս դալիք նոր աշակերտները, Ալիշանի համար, անհրաժեշտ նշանակաւ էին՝ դասարանին կազմութեան համար, որով կ'ուղէ լրացնել թիւը՝ նոյնիսկ ձրիավարժ աշակերտներով, բաւական է որ ճշտելով զպահանջաւ առ ի մէջ պայմանս, այսինքն՝ չափահաս տիւս եւ դիտութիւն» (30 Յունիս 1860, առ Ա. Գ. Հ. Վենետիկ):

140. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 21 Ապրիլ 1861, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

141. Շրջանաւարտներու անուններն են. Գէորգ Տէօփէթեան, Յակոբ Թովմասեան, Վիլէն Գաթըրճեան, Մկրտիչ Լիմոնճեան, Միքայէլ Լիմոնճեան, Պողոս Բէք-Մէղեան, Պողոս Քիւրճեան, Միքայէլ Երւոյնճեան, Յովսէփ Սինանճեան, Գէորգ Սինանճեան, Անտոն Հէքիմեան, Վիլէն Մնացականեան, Ռուբէն Սէթեան, Յովհաննէս Աճէմեան:

142. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 19 Յունիս 1861, առ Ա. Գ. Հ. Վենետիկ: Ալիշան բարի մտածութիւն մը ունեցած է տեսրակի մը մէջ ամփոփելու Մուրատեան վարժարանի բոլոր աշակերտներու անունները, սկսեալ առաջինէն մինչեւ վերջինը, շատ հաւանաբար՝ վարժարանին դիւանին մէջ պահելու համար: Եւ որովհետեւ իմացած էր որ նման տեսրակ մը արդէն իսկ գոյութիւն ունի Ս. Ղազարի մէջ, կը խնդրէ Արքայորդէ՝ ճեթէ գտցնել առ Վեհի դիւանը կամ

1861ի Օգոստոս 22ին, փախման հանդէսը կատարելէ ետք, 14 շրջանաւարտները կը մեկնին վարժարանէն, ընկերակցութեամբ Ալիշանի եւ Հ. Գրիգորի Մերճանեանի. կը հասնին Մարսիլիա. Ալիշան իր յարգանքի եւ սիրոյ վերջին տուրքն է որ կու տայ իր սիրասուն աշակերտներուն: Նաւ կը բարձրանան ամէնքը՝ բացի Ալիշանէ: Միթէ չէ՞ր կրնար ընկերել Ալիշան իր սիրելի աշակերտներուն, որոնց վրայ երեք տարի անդադար թափած էր սիրտ ու հոգի: Հիւրմիւղեան Արքայորդ բարձ նամակներուն մէջ ամենեւին ակնարկ չ'ընէր այս ուղղութեամբ, այլ նախընտրութիւնը կու տայ իրեն աջակից վարդապետներուն, եւ ի վերջոյ՝ վիճակը կ'իյնայ Հ. Գրիգորի վրայ: Տարի մը առաջ, 1860ին, մտածելով յաջորդ տարուան 14 աշակերտներուն Պոլիս դարձին մասին, պահ մը մտքէն անցուցած էր ընկերել անոնց: Գերպ. Եղուարդ Հիւրմիւղ 1860ի Յունիս ամսուն՝ Պոլիսէն կը հրաւիրէ Ալիշանը, ու կ'ընդունի սա տողերը. «... իսկ վասն իմ, որպէս եւ ասէք, դիպողագոյն է զդարձ մանկուոյն առնուլ առիթ. դայս ամ (1860) ոչ է մարթ (...), այլ յամի 1861 ողջոյն դասն երկրորդ (են դառնալոց ի Պոլիս). այս ըստ այժմեան տեսութեան մերոյ, ապագայն Տեառն է փ յանձն: Բայց ինձ թէ դէպ լիցի Երեւան դալ այդը՝ ծանր լիցի եւ անախորժ դարձ՝ առանց տեսանելոյ եւ գինն հայրեմիս մեր գէլայաստան աշխարհ»<sup>143</sup>:

Թէ ինչո՞ւ Ալիշան չ'ընկերէր 1861ի շրջանաւարտներուն, մեզի կը մնայ անծանօթ. այդ թուականներուն՝ ինք շատ լաւ գիտէր թէ տեսուչի պաշտօնէն կը փոխուի, եւ ասիկա լաւագոյն առիթն էր այցելելու իր ծննդավայրը՝ Պոլիս, եւ հուսկ վերադառնալ Վենետիկ, մանաւանդ որ Պոլիսէն իր եղբայրը՝ Սերովբէ Ալիշան, իմանալով իր եղբոր պաշտօնին փոփոխութիւնը, հրաւիրած էր զինքը 4 Սեպտ. 1861 թուակիր երկար նամակով. «Թէ որ վանք դառնալու ըլլաս, նախ քան նոր դրոծոյ զբաղիլը՝ մէյ մը դէպի հոս փախուստ տալը միթէ չէ՞ կարելի. շատ ուրախութիւն պատճառեալ ընտանեացդ համօրէն. եւ մենք աչք չի դոցած մէյ մ'ալ անձայն լուսանկարէն դուրս մէկղմէկ տեսնենք՝ դէյ պիտի չըլլայ կարծեմ»: Սերովբէ Ալիշան չէր գիտեր որ մինչեւ 1901ի Նոյեմբեր 22 պիտի ապաստէր, առանց կարենալ տեսնելու իր հարազատը՝ Քերովբէն:

տեսրք Մուրատեան վարժարանի, յորս նշանակեալ իցեն անուանք աշակերտացն (որպէս ասէ Վ. Հ. Գրիգորիս), աղաչեմ տալ գաղափարել եւ առաքել մեզ» (Ալիշան, 3 Նոյմբ. 1860, առ Ա. Գ. Հ. Վենետիկ): Արքայորդ ինքը անձամբ կ'օրինակէ՝ ըսելով. «զանուանս աշակերտացն անդստին ի սկզբանէ ի Մուրատեան վարժարանիդ, գտանես ընդ թղթոյս» (16 Նոյեմբ. 1860):

143. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 14 Յունիս 1860, առ Գերպ. Եղուարդ Հիւրմիւղ, Պոլիս:











բարևը և ի վարժարանին վիճակը, եւ արդէն կը հասնէր ժամանակը նաւուն ղեկը յանձնելու նոր պաշտօնէութեան: Ալիշան իր լաւագոյն նպաստը բերած էր թէ՛ Միաբանութեան եւ թէ՛ Ազգին զաւակներուն:

(Շար. 2)

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄԺԵՄԻԱՆ

### Résumé

P. LEWOND ALISHAN

DIRECTEUR DU COLLEGE ARMENIEN SAMUEL-MOORAT  
DE PARIS

(Suite, v. «Bazmavep», 1976, Nos 3-4, pp. 316-340)

(P. SAHAK DJEMDJEMIAN)

Une phase importante de la vie du Père Lewond Alishan, l'inoubliable arménologue d'érudition immense, est constituée par son deuxième séjour à Paris (19 Mai 1858 - 3 Nov. 1861). Son activité s'y déroule au Collège Samuel-Moorat de Paris, dirigé par la Congrégation Mekhitariste de Venise; il est d'abord préfet d'études et adjoint au Directeur le P. Rap'ayël T'reanc', auquel il succède comme Directeur du Collège à la suite de la mort imprévue de ce dernier survenue le 9 décembre 1858.

Alishan avait déjà connu une expérience d'activité éducatrice au Collège Rap'ayëlean de Venise, où il enseigna à plusieurs jeunes gens devenus par la suite des pionniers du Réveil arménien et des écrivains célèbres, vers le milieu du XIX<sup>e</sup> siècle. Bien que cette activité d'Alishan soit déjà assez notoire, l'article présenté ici décèle néanmoins quelques traits, restés plutôt dans l'ombre, de l'homme, du religieux et du pédagogue.

La documentation est basée sur les notes journalières d'Alishan et surtout sur sa correspondance adressée au Supérieur général de la Congrégation, l'Abbé Georg Hiwrmwz, et au P. Abraham Carean, auquel Alishan était lié par une profonde amitié.

Cette partie de l'article décrit, en même temps, les célébrations de circonstance dues à l'initiative d'Alishan, les mesures prises par lui pour de meilleurs résultats dans la formation tant intellectuelle que morale des élèves et pour l'accroissement de leur nombre, les tentatives faites pour une utilisation plus raisonnable des vacances du point de vue récréatif et formatif.

Alishan s'y révèle également un administrateur doué d'un haut sens pratique: il réussit à élargir l'édifice de l'école, à restaurer les classes et la chapelle, à embellir et à rendre plus fonctionnel le jardin; il s'emploie au recouvrement des taxes d'études, souvent non sans difficultés, mais avec des résultats hautement satisfaisants.

## ՍՈՒՐԲ ՕԳՈՍՏԻՆՈՍԻ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՍԷՋ ՆԵՐԳՈՅՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԵՒ ԵՆԹԱԿԱՅԻՆ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ\*

(MEMORIA SUI)

### ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Դարերու միահամուռ վճիռով, Ս. Օգոստինոս կը պատկանի Արեւմտեան մշակոյթի մտքի եւ հոգիի հսկաներու այն շարքին՝ որոնք մտածումի ընդհանուր պատմութեան մէջ կարեւոր եւ ինքնուրոյն տեղ մը կը գրաւեն:

Ան բազմաթիւ սերունդներու հիացումին առարկայ եղած է՝ իր մտածումի խորութեամբ, նուրբ եւ թափանցող հոգեբանական վերլուծումներով, այն անկեղծութեամբ եւ համարձակութեամբ՝ որով լուծումներով, այն անկեղծութեամբ եւ համարձակութեամբ՝ որով զաղախարներուն մէջ կըցած է ցոլացնել իր կեանքի հարազատութիւնը մարդկային իրականութիւնները՝ իրենց բովանդակ ջերմութեամբ, ու վերջապէս՝ այն հաւատքի եւ համոզելու զօրութեամբ՝ որ կը բղխի իր ունէն:

\*) Այս յօդուածը՝ մասնակի թարգմանութիւնն է համանուն աւարտաճառին, զոր Հեղինակը ներկայացուցած է Իսթանպուլի Պետ. Համալսարանի Գրական մաս-  
նաճիւղի իմաստասիրութեան բաժնին, որպէս աւարտաճառ պատկաւորման (doc-  
torat): Բնագիրը լոյս տեսած է նոյն բաժնի Բանբեր «Felsefe Arkivi» (Իմաս-  
տոր): Բնագիրը լոյս տեսած է նոյն բաժնի Բանբեր 19: Հոս թարգմանուած մասերն  
տասիրութեամբ Դիւան) տարեգրքին մէջ, 1975, թիւ 19: Հոս թարգմանուած մասերն  
են՝ աւարտաճառին ներածութիւնը եւ Բ. գլուխը: Ուսումնասիրութեան ամբող-  
ջութիւնը, ընդարձակօրէն վերամշակուած եւ ճոխացած նորագոյն մատենագիտու-  
թեամբ, սկսած է հրատարակուիլ՝ Իտալիոյ ձեռնով քաղաքին մէջ լոյս տեսնող  
«Filosofia oggi» (Իմաստասիրութիւնը՝ այսօր) թերթին մէջ (Ա. մաս, ամի, I,  
1978, էջ 271-290): Ներկայ հայերէն թարգմանութիւնը, Հեղինակէն տեսնուած,  
ազնուօրէն կատարուած է «Felsefe Arkivi» թերթին հրատարակութեան վրայէն,  
Օր. Արփի Թոթոյեանի կողմէ: